

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՄԱՌՈՇՈՒԹԻՒՆ

ՅԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՈՐՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱԿՆ.

ԱՅԻ Է ՑՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՅԵՐԻ.

Բնդհանութեան պատմութեան ընթացքում
շրջաններ և սահմանափակումներ ընդունելը
ուղղակի պատահական է և դրա համար մի-
անդամայն քմահածոյական քանի որ պատ-
մութիւնն ինքը՝ որի մէջ անցած և յաջոր-
դող գեպքերը միացած են պատճառական կա-
պերով, բաժանմունքներ չեն ընդունում նա մի
շարունակուող յարատեռութիւն է; Այդ պատ-
ճառով ոչ մի ձեռնարկութիւն այնքան ան-
խորհուրդ չէ կարող լինել քան այն՝ որ կա-
մենում են, հետեւլով մեր սովորական գոր-
ծածական ընդհանուր պատմութիւններին,
հաստատապէս որոշել հռովմէական տէրու-
թեան վախճանը և հին ու միջին դարերի
սահմանը; Մեր գպրոցներում ժամանակա-
գրական կարգով որոշուում էր կամ որոշուում
է, մազաշափ ծցլութեամբ՝ ընդհանուր պատ-
ճառական տեսակէտից այդ նշանաւոր գարազլիի
նոյն իսկ տարբին; Եւ այն էլ սովորաբար ուշա-
գրութեան էր առնում միմիայն արեմուտքը,
մինչդեռ հակապատմական, է որ գերադաս են
համարում միայն արեմտեան մասը և ինկատի
առնում նրա պատմական զարգացումը և ըստ
այնմ՝ առանց այլեւցը մթեանութեան հռովմայեցուց
կայսութեան և հին դարի վերջը 476 թիւ-
ուը ընդունուում; որովհետեւ այդ թուին հռով-
մէական տէրութեան—Imperium Romanum—
արեմտեան բաժնի վերջի օրինական կայսրը
գահից զրկուեց և թոշակի կապուեց. որ, ե-
թէ ընդհանուր պատմութեան տեսակէտից
գատենք, այնքան նշանաւոր գեպք էր, ինչ-
քան Սերբայի Միլան թագաւորի հրաժա-
րականը 1892 թուին Բայց ժամանակակից-

ները այդ այդպէս ասուած ընդհանուր պատ-

ճառական կարեորութիւն ունեցող եղելութեա-

նը այնքան քիչ նշանակութիւն են առեւել,

որ նոքա—և ամենից առաջ յաղթանակող Դեր-

մանացիները—առաջուայ պէս շարունակել են

Օդովակի և յետոյ Թէոդորիխի երկիրը

Հռովմայեցուց տէրութեան մի մասը համարել,

իրենց հպատակներին կայսեր հպատակներ

ճանաչել և կայսերական տէրութեան վերա-

բերեալ կարգագրութիւնները պահպանել:

Ահա այդ էր պատճառը, որ ոսկէդրամը

նոյն իսկ գերմանական կոչուած տէրութիւն-

ների մէջ կտրուում էր կայսեր պատկերով:

Մինչև անգամ դոթերը վստահանում էին

Յուստինեան կայսեր գէմ յանդիման յայտա-

բարել թէ նոքա մշտապէս յարգել են կայսեր

առանձնաշնորհութիւնը: Խսկ տէրութեան ա-

րեկելեան մասը, որը կարողացաւ պահպանել

հնուց ժառանգած քաղաքակրթութիւնն ա-

ւելի մեծ եռանդով և յաջողութեամբ քան

արեմտեան մասը ոչ մի կերպ չէ կարող եր-

կու մասերի՝ հին և միջին դարերի բաժա-

նուել, յամենայն դէպս Խոլամի երևալուց ոչ

առաջ, որովհետեւ միայն Հերակլի իշխանու-

թիւնից յետոյ, այն զարմանալի կռուով, որ

վարեց Բիւզանդիոնը սեմիտական ցեղի ահեղ

յարձակման գէմ սկիզբն է առնում գարուկէս

շարունակուող հօգեկան խաւարը, որը պարզ

կերպով սահմանում է տիեզերքի նոր օրերի

մուտքը: Բայց եթէ, օրինակի համար, հա-

մառօա բիւզանդական պատմութիւնը սկսուեր

Լեսն խաւարցու գահակալութիւնից, ընթեր-

ցողը կրպիուէր իսկապէս ամենակարեսոր և ընդ-

հանուր—պատմական ամենանշանաւոր գարու-

ծանօթութիւնից, մի շրջանի՝ որի մէջ պէտք է

որոնել այն նախապայմանները և սկսուածք-

ները որոնք վերջը բիւզանդական առանձնայա-

տուկ գարաշը մասի պատմական զարգացումն

են ցոյց տալիս:

Սակայն նոյնքան էլ պարզ է և հասկա-

նալի, որ հեշտութեամբ չենք կարող մերժել

պատմական նիւթի շրջանների և սահմանա-

փակումների բաժանումն: Բայց մեր մէջ պէտք

է կենդանի լինի այն զիտակցութիւնը, թէ

մէնք իսկապէս միմիայն յեցափայտ ենք զործ

գնուում: որպէս զի կարողանանք առարկայի մա-

սին ձեռք բերել ընդհանուր հայեցք: Հենց այդ իսկ պատճառով, ցանկալի է հեռու մնալ այն ընդհանրացած պրոֆեսորական և վարժապետական իմաստակութիւնից, որ ոչ մի պատմական գրուածք կամ գասագիրք վաճառքի չեն հանում: մինչև որ նա չունենայ աւելի լաւ պատճառարանուած շրջաններ կամ կը տըրառուած շինի տրամարանօրեն ուղիղ համարուած բաժանմանընթերով: Սակայն մենք ես այս գեղքում ելի նպատակայարմար ենք գտնում թողնել, որ աւանդական ընդհանուածքը մնայ: Մենք շատ վաղուց է վարժուել ենք՝ Արկադիսից մինչև Կոստանդին Թ-ի (395—1453) կայսրների պատմութիւնը միացնել և ընդունել իրեւ արեւելահռովմէական կամ բիւզանդական պատմութիւն: Այս անգամ էլ միմիայն գործնական հայեցակէտին գերակշռութիւն տալով, կը սահպանենք մենք ես այդ հին՝ ֆըրանկական դասաւորութիւնը: Թէև շատ լաւ յայտնի է, որ այդ բաղմից ժխտուել է այն գիտնականների կողմից, որոնք այլապէս սկըզբունքով պատմական շրջանների բաժանման ոգեսորուած կողմակիցներ են: Բաւական արդարացի կերպով շեշտուել է, թէ չնայած որ Թէոդոսի մահունից յետոյ տէրութիւնը բաժանուել է, ժամանակակիցները գեռ երկար դարեր հասկացողութիւն ունեին միայն մի հռովմէական տէրութեան մասին—Res publica կամ Manus publica—սովորաբար այդպէս էր անուանում է և ը գարերում Սպանիայում և Ֆրանկների թագաւորութեան մէջ: Ուստի կարելի է արեւմտահռովմէական տէրութեան—ինչպէս նաև բնականաբար արեւելահռովմէական տէրութեան—մասին խօսել միայն կարլոս Մեծի արեւմտահռովմէական կայսրութեան հաստատելուց յետոյ: Այդ էլ այն չափով է ուղիղ և յարմար, բայց և այն չափով աւանդական, ինչպէս իրաւաբանների լեզուի մէջ գործածական է, որ նոքա Աւգոստոսից մինչև Դիոկղէտիանի ժամանակը—Dyarchia—երկպետութիւն են կոչում: իսկ մացած շրջանը—Monarchia—միապետութիւն: Խակապէս իրաւ է և ուղիղ եթէ սահմանադրութիւնը աչքի առաջ ունենալով տաենք, որ այդ շրջանում տէրութիւնը բաժանուած էր կայսեր և սենատի մէջ: Սակայն իրապէս արդարացի են

նաև տէրունական իրաւունքի մէջ այնքան տղէտ համարուած ժամանակագիրները, որոնք կեսարի և Աւգոստոսի ժամանակից են սկսում հռովմէական միապետութիւնը՝ և այդպէս էլ իրապէս, թէկուզ ժամանակակիցները և զ քանի զիտնականները ուրիշ կերպ են հասկանում: Թէոդոսի մահունից մինչև Կոստանդինուպոլիսի անկումը գոյութիւն ունեցող տէրութիւնը արեւելահռովմէական է, իսկ մանաւանդ է դարից ի վեր զուտ յունական է:

Որպէս զի գործնական կարիքներին բաւականութիւն տանք և ոչ թէ որ և է բարձր, ազատմական—փիլիսոփայական, հայեցակէտի համար յենարան ստեղծենք, նիւթը բաժանում ենք հետեւեալ ստորաբաժանում ների, որ հնուց մեզ է անցել:

- I. Նախայուստինեան շրջան 395—518
- II. Յուստինեանի և իւր յանութիւնների գարագուխ 518—610
- III. Հերակլի հարստութիւնը և Խալամի գէմ կոփւ 610—717
- IV. Վերածնութիւն սիրիական (Խալամեան) կայսրների ժամանակ և պատկերամարտութիւն 717—867
- V. Արեւելահռովմէական իշխանապետութեան բարձրագագթը հայկական հարստութեան ժամանակ 867—1025
- VI. Տէրութեան անկումը 1026—1081
- VII. Կոմեններ և Անգելներ 1081—1201
- VIII. Նիկայի կայսրութիւն 1204—1261
- IX. Պալէոգների վերահստատութիւնը և կործանումը 1261—1453

I. Նախայուստինեան շրջան. (396—618).

Թէոդոս Մեծը (379—395), մ.թ հօրհանձարեղ որդին, այն զօրավարների և տէրութեան փրկողների երկար շարքի վերջին անդամն էր, որոնք կլաւզիոս Գոթիկոսից մինչև Վաղենախիններ երկաթեայ բռունցքներով վերստին կռել են հիմնից ի վեր խախտուած տիեզերական իշխանութիւնը: նա ներկայանում է Վաղենտի սարսափելի հարուածից՝ Ազրիանազոլսի—bellum lacrimabile—արիւնա-

Հեղ կռօւից յետոյ, գերմանական փառզից տէրութեան ամենափայլուն պահպանող և առզատիչ Մի անգամ՝ ևս տէրութեան հողից յետ մզուեց զոթական ժողովրդի ալիքը: Ներքուստ էլ նորս կտռավարութիւնը դարաշրջան է կազմաւմ: և այդ այն յաղթութիւնով, որ տարաւ ու զզափառ եկեղեցին արխանոսութեան գէմ՝ յինուած կայսերական ծանրակիւու ազգիցութեան վրայ, բացի այդ՝ եռանդուն միջոցներ ձեռք առնուեցան վերջացնելու հին հեթանոսութեան մնացորդները, որ գեռ կուռ էր հռովմէական արխանորատիայի մէջ: Նա իւր մահուան ժամանակ՝ 398 թ. յունուարի 17[՝] ամբոջ տէրութիւնը թողեց կառավարելու իւր երկու որդիներին՝ Արքադիասին և Հօնորիոսին: Վերջինը ստացաւ արևմտեան կէսը՝ Խտալիա (Խտալիա և Աֆրիկա) և Գաղղիա (Գաղղիա—Սպանիա—Բրիտանիա) պրէֆեկտորութիւնները, մինչդեռ նրա առաջ եղայրը արևելքի վրայ էր իշխում. Խլիւրիկա (Խակիա և Մակեդոնիա) և Արևելք (Ասիա, Պանտոս, Օրբենտ, Թրակիա, և Եգիպտոս) պրէֆեկտորութիւնները:

Թէոդոսի մղած պատերազմը իւր գահակից կայսեր Եւգենիոսի գէմ, զրիել էր ամբոջ արևելքը զօրքերից: Եւ աչա մինչդեռ Հօնորը ծորայ պահակով ներս մտնելով՝ յարձակուել էին տէրութեան արևելեան մասի վրայ, գոթական դաշնակիցները, որ բանակել էին Միւսիայում և Թրակիայում: իրենց արքայական զօրապետի առաջնորդութեամբ աւերում էին Խլիւրիկայի հիւսիսային մասը և սպառնում էին մայրաքաղաքին: Միայն երբ Ստիլիքոնը արևմտոքից վրայ հասաւ, Դոթացին ստիպուեց ամբանալ Թհասալիայում: Բայց որովհետեւ Արքադիոս կայսրը Ռութինոսի զրդմամբ, զուցէ ոչ առանց պատճառի, պահանջեց, որ Ստիլիքոնը հեռանայ և արևելեան գնդերը հատալիայից յետ ուղարկի Կոստանդինուպոլիս, վերդիները դայնասի հրամանատարութեան տակ յարձակուեցին մայրաքաղաքի վրայ: Ռութինոսը նոցա զոհ գնաց, և նրա տերը բռնեց իրեւ զեկավարութիւնի մինխօսք Եւտուողը բռնեց իրեւ զեկավարութիւնին. և աչա Ալարիքը ձեռնարպիոս ներքինին. և աչա Ալարիքը ձեռնարպիոս նի գէմ Թերմոպիլեկի անցքով: Ելեսիուը,

Պիրեյոսը, Մեղարան, Կորինթը, Արգոսը և Սպարտան ընկան զոթական հրոսակների ձեռքը իսկ մոլուանդ վարդապետները նոցա քրիստոնէական և բարբարոսական եռանդը բորբոքել էին մինչև վայրենի կատաղութիւն՝ հեթանոսութեան վերջի ապաստանարանների և ամբութիւնների գէմ: Սակայն երբ նոքա արշաւում էին Էլիսի վրայ, յետեկից նոցա վրայ ընկատ վերադարձած Ստիլիքոնը և գոթական զօրքը վակից արկատեան Փոլոէ սարահարթում: Սպասածին հակառակ՝ խաղաղութիւն կայացաւ և արևելահռովմէական կառավարութիւնը երկիւղ աղգող Դոթին նշանակեց Իլլիւրիկայի զօրաց հրամանատար—magister militum per Illyricum:

Աւելի վանդաւոր դարձաւ Փախզիայում բնակեցրած Դոթութունդերի և Օստղոթերի ապստամբութիւնը Կոմէս Տրիբիզիլլի առաջնորդութեամբ: Արևելահռովմէական արքունիքում գերակշռում էր հռովմէական ազգային կուսակցութիւնը. Գերմանացիների զօրապետները, զօրեղ Գայնասը և նրա կողմնակիցները, սաստիկ վիրաւորուած էին: Նրաւէ Տրիբիզիլլը կորսատիկը հարուած ստացաւ Պետիփիայի քաջ ժողովրդից, բայց երբ Գայնասը նրա գէմ ուղարկուեց և ծածուկ միացաւ նրա հետ հռովմէական Լեռն զօրապետը, իւր պաշտօնակցից դաւաճանուած, պարտութիւն կրեց Դոթացու ձեռքից: Գայնասը և Տրիբիզիլլը ընդհանուր կացութեան տէր գարձան և ստիպեցին կայսեր արձակել իւր մինհստրին:

Գայնասը եկաւ Քաղեգոն, և սարսափած Արքացիոսը ստիպուած էր մայրաքաղաքում բնակարան տալ Գոթերի զօրքին: Այնպէս էր թուում թէ արևելքը նոյնպիսի բեկորների պիտի բաժանուի, ինչպէս յետոյ արևմտուքը: Գերմանական ցեղից թագաւորը պատրաստ էր այսուեղ Թէոդոսի հարսաւութեան տեղը բռնելու: Սակայն մայրաքաղաքի ժողովուրդը սոքի կանգնեց, երբ արիոսեան Գոթերը սկսեցին վիրաւորել նրա կրօնական զգացմունքները: Գոթերը ստիպուած էին քաղաքից հեռանալ, ով յետ մնաց, ենթարկուեց ժողովրդի կատաղութեան: Գայնասը աւարի առնելով Թրակիան՝ պատրաստուեց Արիուգոսի մօտից Ասիա

անցնելը բայց Փռաւիտա հաւատարիմ Գողթը Հռովմէական նաւատորմիզով ոչնչացրեց նրա զօրքը: Հոների թագաւոր Ուլդէսը կայսերական արքունիք ուղարկեց գէպի թթրտկիա փախչող ապստամբի զլուխը: Փռաւիտան՝ տէրութեան ազատարարը կոնսուլի աստիճան ստացաւ, թէե ինքը հեթանոս էր:

Սոյն Արկադիոսի ժամանակ Բիւզանդիոնում բորբոքուեց տէրութեան—imperium և Հոգեորականութեան—sacerdotium հին կոփւը, որի վախճանը կառավարութեան և եկեղեցու համար Արևելահռովմում տիպիքական մնաց:

Յովհաննէս Անտիոքացին, որ յետոյ եկեղեցուց Ոսկերերան մականուանուեց, ոյժ ստացած իւր Ճարտասանութեամբ և ժողովրդից վայելած յարգանքով Շոտլանդիոյ պուրիտանների նման, ոչ կայսերական տան փարթամութիւնն էր լուութեան տալիս և ոչ ել հարուստների բարբուվարքի ապականութիւնը: Նա ինքն անձամբ ճգնաւորական ամենախիստ կեանք էր վարում և մի և նոյն ժամանակ իրրե կրօնապետ՝ պապական իշխանապետութեան գիտակցութիւն ունէր: Ասիան, որի դիմաւոր կեղրոն Եփեսոսը հպարտ էր Յիսուսի սիրելի աշակերտի հիմնած եկեղեցիով, Յովհանն իւր այցի Ճանապարհորդութեան ժամանակ անխնայ ուժով ենթարկեց Նոր-Հռովմի քահանայապետների իշխանութեան, որոնք 381 թօւից հաւասարուել էին Հին-Հռովմի քահանայապետներին: Նրա թշնամիները զլուխ բարձրացրին: Իրաւ է, նա շատ հեշտութեամբ աղատուեց մայրաքաղաքի իւր հակառակորդ դատարկ և անհոգի ճարտասան Սիւրիացի Սեվերիանոս եպիսկոպոսից, բայց երկրի գրութիւնը աւելի ծանրացաւ, երբ կառավարութիւնը նրա գէմ հանեց նրա սիսերիմ թշնամի՝ Աղեքսանդրիայի փառասէր և սկզբունքներից զուրկ Թէոփիլոս պատրիարքին: Աղեքսանդրացին 391 թ. նոր էր կործանել Սերապեյոնը և շրջապատռած էր առանձին փայլով իրրե կուռքի կործանիչ: Ս. Աթանասից և նրա յաջորդ Պետրոսից ի վեր, որը 381 թ. տիեզերական ժողովի զեկավարն էր, արևելքը սովորել էր Ս. Մարկոսի գահի յաջորդներից սպասել հոգեոր գործերի վերջնական վիրուց, Թէոփիլոսը կարողացաւ իւր մեղենայութիւնը ունեցած յարաբերութիւնը, և այդ առանձին նշանակութիւն ունէր Բիւզանդիոնում:

Գործի կերպարանք տալ, դրա համար նա զըրաւեց և գործակից արաւ Կոստանտինոսի զրեթէ հարիւրամեայ ուսումնական, բայց սաստիկ սահմանափակ Եպիփանին՝ հերձուածողների գէմ մարտնչողին: Նոքա՝ այսպէս ասած «կաղղնիի» մօտ կայացած՝ ժողովում՝ Նոր-Հռովմի քահանայապետին յայտարարեցին պաշտօնից զրկուած։ սակայն սա, օգտուելով մայրաքաղաքի ժողովրդի յուղունքից, փառաւոր յաղթութիւն տարաւ: Թէոփիլոսը փախաւ և կառավարութիւնը փոքրոգութեամբ յետ նահանջեց, մինչեւ իսկ Յովհաննէսը՝ իւր յաջողութիւնով աւելի համարձակ զարձած, կայսրուհուն իսկ անձնապէս խիստ վիրաւորեց: Ժողով զումարուեց 404 թ., որով նա վերջնականապէս զլորուեց, թէե արեւմտահռովմէական կառավարութիւնը և արեւմտատքի ննոկենտ թ պապը մեծ եռանդով նրա համար աշխատեցին: Սամակազրութիւններով նա պահպանեց իւր ազգեցութիւնը նոյն իսկ Կոկիսոնում՝ իւր աքսորման տեղում՝ ուստի տէրութիւնը որոշեց քշել նրան հեռու Կովկաս. բայց զժրախտ ծերը Պիթիոս՝ իւր աքսորավայրը չհասած, Ճանապարհին մեռաւ: Ընդհանուր եկեղեցին բարձր է պահպանել «տիեզերական ուսուցչի» յիշատակը, Պրոկոպ պատրիարքը 438 թ. հանդիսաւոր կերպով նրա նշխարները բերեց մայրաքաղաք, և Թէոփոս թ. Ծնկառք սրբի մատրան առաջ թողութիւն էր ինդրում իւր մեղաւոր ծնողների համար: Բայց չնայած այդ հածոյական և մեծաչողի ձեւերին, այնու ամենայնիւ կայսերական իշխանութիւնը սկզբունքով մեծ յաղթութիւն էր տարել: Նա առաջին անդամն էր հիմնուած իւր գերիշխանութեան վրայ կարգաւորել իւր գէպի եկեղեցին ունեցած յարաբերութիւնը, և այդ առանձին նշանակութիւն ունէր Բիւզանդիոնում:

Երբ 408 թ. Արկադիոսը մեռաւ, նա թողեց մի անչափահաս որդի, Թէոփոս թ փոքրին, որը իրրե ծմարիտ ծիրանածին՝ իւր երկարամեայ իշխանութեան ժամանակ 408—450 երբէք չափահաս չգարձաւ: Մինչեւ 414 թ. տէրութեան գործելը կառավարում էր թիկնապահների առաջնորդ—praefectus praetorio—Անթիմոսը, որ ունէր կոնսուլ և պատրիկիոս բարձ-

րագոյն պատուց տիտղոսները և միանգամայն խելացի քաղաքագետ էր: Յետոյ կառավարութիւնն անցաւ կայսեր քաղաքագետ Պուլքերիս քրոջ ձեռքը՝ որ կառավարում էր սենատի խորհրդակցութեամբ: Նա իւր եղբօրը 426 թ. պատկեց մի փիլիսոփայի լաւ կրթուած աղջկայ՝ Աթենայիսի հետ: որի քրիստոնէական անունն էր Եւդոկիա: սա շատ շուտով մեծ ազդեցութիւն ձեռք ձեց կառավարչական զործերի վրայ, միացած Քրիստոփիոսներքինու հետ: Եւդոկիայի անկումից յետոյ վերջինս կայսեր միանգամայն իւր ձեռքն առաւ նրա իշխանութեան վերջին տարիներում: Պուլքերիան գժողոհ: առանձնացել էր իւր մասնաւոր պալատը:

Մինչդեռ արևմուտքը աւերակ էր գարձել, և Դոթերը՝ Սուերներն ու Վանդալները անկախ տէրութիւններ էին հաստատել Գաղղիայում: Սպանիայում և Ափրիկայում, իսկ արևմուտքի անուանական կայսրը իրապէս սահմանափակուած էր միայն Ապենինեան թերակղզու մէջ, տէրութեան արևելեան մասը այդ վտանգաւոր շրջանում դիմացաւ բախտաւոր և բաւականաշափ հանդարտ կերպով: Թէոդոս Բ-ի երկար իշխանութիւնը ընդհանրապէս շատ աղքատ է արտաքին պատահարներով: Հոնորիոսի մահից յետոյ Արտարուրիոս և իւր որդի Ասպար զօրավարները բաւական յաջող կերպով կարգաւորեցին Խոալիայի գործերը, նոքա վերահաստատեցին օրինաւոր իշխանին, որը Յովհաննէս բռնապետից հեռացրուած էր, և նորից գերակշռող դարձրին արևելքի ազդեցութիւնը:

Թէոդոս մեծի ամենամեծ քաղաքական սխալ փորձեց մեծ եռանդով նորից ուղղել Թէոդոս փոքրի՝ բազմիցս արհամարհուած՝ կառավարութիւնը: Տրդատից և Դիրիգոր Լուսաւորից յետոյ հայկական ինքնուրոյնութիւնը կորցրած՝ բայց առանձին կարեւոր նշանակութիւն ունեցող թագաւորութիւնը գտաշնակցութեամբ միացած էր հոռվմէական տէրութեան հետ: բայց 365թ. Յորիանոս կայսեր խաղաղութեան շնորհիւ կորել էր այդ ազդեցութիւնը: Իրաւ է, Վաղենտինը խելացիութեամբ Պապին թագաւոր էր նշանակել և օգնել էր բայց երբ հառվայիշիք անաղինիւ ճանապար-

հով սպանեցին նրան, սաստիկ պատերազմ սկսուեց Հայոց քրիստոնեայ—կղերական և զրագաշտական նախարարների մէջ: Եթէ Հռովմայեցիները լաւ հասկանային իրենց քաղաքական շահերը, նոքա պէտք է ամեն կերպ, ինչպէս որ Կոստանդինի տան կայսրներն էին արել պաշտպանէին Մամիկոնեաններին, որոնք հոգեւորական կուսակցութեան առաջնորդներն էին: Փոխանակ զրան՝ միանգամայն անհասկալ կուրութեամբ—այդ բանում նրան կարելի է համեմատել Փրիգրիխ Մ'եծի հետ—Թէոդոսը 387 թ. Պարսից տէրութեան հետ համաձայնութիւն կայցրեց և բաժանեց Հայկական թագաւորութիւնը: մի բաժանմունք՝ որի մէջ առիւծարաժինը արևելցիներին ընկաւ: Նախկին Մ'եծի Հայոց թագաւորութեան միայն մի հինգերորդ մասն ընկաւ Հռովմայեցիներին՝ Թէոդոսովոլիս (Կարին) զիստոր քաղաքի հետ: Մ'ացած մասը, որտեղ շարունակեց էլի 40 տարի գոյութիւն ունենալ պարսիկներից նշանակուած Հայոց անուանական թագաւորութիւնը, պարսկական իշխանութեան տակ ընկաւ: Պարսիկները թոյլ էին տալիս իրեւեկեղեցական և ուսումնական լեզու միայն ասորերէնը: յունարէնի ոչնչացման համար յայտարարուեց կաւ: Հայաստանի երկու մեծ հանճարները: Ա Սահակը և Մ'եսրոպը որոնք տառերի զիւտից յետոյ մայրենի լեզուով թարգմանել էին Ս. Դիլքը, ստիպուած էին պարսից իշխանաւորների հաղածանքներից փախչել յունական բաժինը: Հռովմի այն ժամանակուայ արքունիքը, այդ գէպքում անհամեմատ աւելի հեռատես քան հարստութեան նախահայրը, հայերի սկսուածքը հանրական կորմից ըստ կարելոյն օգնում էր և տէրութեան միջոցներով նպաստում էր երկու մեծ Հայերի թարգմանչական դպրոցին: Այդ հոգեւոր գարոցի ջանքերով առաջ եկաւ Հայոց թարգմանական հարուստ զրականութիւնը, (Ոսկեայ դար Հայոց զրականութեան) որ միանգամայն կախումն ունէր յունականից: և ժողովուրդը, որ մինչեւ այդ ժամանակը զըրականութիւն չունէր, մտաւ քաղաքակիրթազերի շարքը: Դրանով Հայաստանը վերջնականապէս անջատուեց արևելքի բարբարոսութիւնից և ընդ միշտ միացաւ արևմտահել-

նական բարեկրթութեան հետ Այդ ծառայութեան մի մասը որպէս չափով պատկանում է արհամարհուած թէողոս փոքրին:

Բայց գառնանք այժմ և հետեւնք քաղաքական արտաքին գէպքերին: Այդ շրջանում տէրութեան համար իսկապէս վտանգաւոր գարձաւ Հոների մեծացած իշխանութիւնը: Անթեմիսը 412 թ. յաջողութեամբ յետ էր մզել այդ բարբարոսների յարձակումը, իսկ Դանուբի վրայ մի նաւատորմիդ պահպանում էր տէրութեան սահմանը. բայց 424-ից ի վեր կայսրը թափառականների թագաւորին հարկ էր վճարում: Դրութիւնը աւելի վատացաւ, երբ քաջամարտիկ Ատահլան իւր զօրքավ բանակ դրեց Պանոնիայում 441 թ. բացի Հոներից Պարսիկներն էլ սկսեցին սպառնալ տէրութեան սահմաններին, իսկ Վանդալներն ու նոյա հետ միացած ծովաչէնների նաւատորմիդը թալանում էին տէրութեան ծովային ափերը: Դանուբի ամրոցները՝ Վիմինացիում և Սինդիգունում, Մարդոս և առաքելանման կոստանդնի ծննդավայր Նախոս, Փիլիպոպօլիս և տէրութեան ուրիշ կարեռ քաղաքներն ընկան Հոների թագաւորի հարուածների տակ: Մայրաքաղաքը արգէն դողում էր, բայց անառիկ Ասեման քաղաքի պահապան քաջ զօրքը յաջողութեամբ պաշտպանուեց և նորից վերակենդանացրեց Հառվամյեցիների թուլացած քաջութիւնը: Անատոլիոսը 443 թ. խաղաղութիւնը գնեց վճարելով 6000 ֆունտ ոսկի և տարեկան 700 ֆունտ հարկ: 447 թ. վերսկսեցին թշնամութիւնները բայց վերջ դրուեցին Մաքսիմոսի դեսպանութեամբ: Նրան ուղեկցում էր ճարտասան Պրիսկոսը քարտուղարի պաշտօնով. սա թողել է մեզ Հոների զիլսաւոր բանակի վերին աստիճանի հետաքրքիր և շատ կենդանի նկարագրութիւնը: Խաղաղութիւնը վերահսկատառեց, բայց մինչեւ թէողոսի մահը շարունակեցին տուրք վճարել:

Այդ կառավարութիւնը աւելի կարեռ էր և համարեա վճռողական նշանակութիւն ունեցաւ եկեղեցական ժամանակակից խնդիրների վերաբերութեամբ: Քրիստոնեայ տէրութիւնը պաշտօնապես և բռնի կերպով ճնշել էր աստուածների հին պաշտամունքը, բայց

եկեղեցին զայն բացեց իւր գաները և խելացի տնաւսութեամբ դիւրացրեց հնահաւանների մուտքը նոր համայնքի մէջ: Նոքա նորից զրտնում էին իրենց հին հեթանոսական աստուածներին իրացնեցին սրբերի մէջ, միայն տարբեր տարազով: Ամբովի և մանաւանդ կանանց մէջ պահանջ էր զիմել շատ անուն ունեցող բնութեան մեծ աստուածուհուն դրա համար եկեղեցին բարձրացրեց Աստուածածնի պաշտամունքը, հեթանոսներն էլ ծագրում էին Մարդիամի ջերմ պաշտամունքն և նրան անուանում էին «Նոր Կիւրելէ» կամ «Նոր Խղիս»:

Աղեքսանդրիան աստուածաբանները հետեւելով Որիգէնի այլաբանական բացարութեան, ներկայանում էին մոդայի աստուածաբանութեան ամենաչերմ պաշտպաններ, մինչդեռ Անտիոքի գորոցը իւր մեծ զեկավարներով՝ Դիոդորոս Տարսոնացու և Թէոդորոս Մոպսուեստացու ձեռքով թէեւ առանց հետեանքի, կռուում էր ժամանակի ամենասուժեղ հոսանքի գէմ և փորձում հաստատուն պահպանել սուրբ Դրքի լուրջ և ուսումնական մեկնարաննական արուեստը: Նեստորը, մայրաքաղաքի նոր պատրիարքը, որ ծագում էր Գեղմանիկէ քաղաքից և հաւատարիմ էր իւր հայրենիքի աւանդութիւններին, թէ ճառերով և թէ գրութիւններով կռուում էր - theotōkos - աստուածածին գարձուածի գէմ որ իւր կարծիքով հակասառածեան էր, որով նա չափանց յուղեց մայրաքաղաքի ժողովրդի բարեպաշտական զբացմունքները: Սուրբ Կիւրելը, Թէոփիլոսի եղբօրորդին և Աղեքսանդրիայի առաքելական գահի վրայ նրա յաջորդը, որ գովուած էր իրեւ եկեղեցական ատենարան և հեղինակ և քաջ տեղեակ էր եկեղեցական քաղաքագիտական վարչական գաղտնիքներին, անցաւ նրա հակառակորդների զբուխը: Ի զուր էր աշխատում Նեստորը, որին կայսերական իշխանութիւնը մի ժամանակ հովանաւորում էր, իւր ընթացքը փոխել: Աղեքսանդրիայի աթօռակալը չկամեցաւ ձեռքից բաց թողնել ցանկալի առիթը առանց խոնարհացնելու մայրաքաղաքի իւր հակառակորդին, որը շատ էր գէպի բարձրը ձգտում: Եփեսուում 431 թ. զումարուեց տիեզերական ժողով: Արևմուտքի պատրիարքը, կեղես-

տինոս պապը, որ սահմանափակ մէկն էր և
անտեղեակ էր եկեղեցական վէճի խակական
պատճառներին, քրիստոնէութեան առաջի գա-
հի ծանրակշխա հեղինակութիւնը զրեց Կիւ-
րեղի կը նժարի վրայ: Ժողովը սկսեց իւր
զործերը և չապասեց որ գային արևելքի ե-
պիսկոպոսները, որոնք հակուած էին Նեստորի
կողմը, և ոչ էլ ուշադրութեան առաւ կայսերա-
կան ներկայացուցչի ընդդիմութիւնը: Նեստո-
րին հրատարակեցին պաշտօնից զրկուած: Սա-
կայն երբ հասաւ Յովհաննէս Անտիռքացին, երկ-
րորդ ժողով գումարեցին կայսերական իշխա-
նութեան համաձայնութեամբ. սոքա էլ պաշ-
տօնագուրք արին Կիւրեղին և ՄԵՒԹՈՆ Եփեսա-
ցուն: Բայց հոգեորականութեան և ժողովրդեան
աշազին բազմութեան տրամադրութեան առաջ
սաստիկ թուլացան թէ կառավարութիւնը և թէ
Անտիռքի եպիսկոպոսը: Կիւրեղին դուր գալու
համար, որը չէր խնայել արքունիքի աղղեցիկ
անդամներին դրսմական նուելներ տալու, զո-
հեցին Նեստորին, նա մեռաւ աքսորում Ասո-
րական հոգեորականութիւնը միութեան գաշն
կապեց Եգիպտոսի պատրիարքի հետ և այն էլ
այնպիսի պայմաններով, որի տակ կարող էր
ստորագրել՝ առանց խղճի խայթի նաև նոր
հոգվելական պատրիարքը, որը ենթարկուել էր
նզորքի: Կիւրեղի բազմաթիւ վկայութիւնները,
որով նա փորձել է պաշտպանել այդ միութիւ-
նը, ցոյց են տալիս նրա դաւանաբանական
շփոթութիւնը և ապացուցանում են բացար-
ձակապէս, որ Աղեքսանդրիայի մեծ եկեղեցա-
կանի համար այնքան հաւատար նշանակութիւն
չունէր, ինչքան իշխանական իրաւունքը: Եւ
խսկապէս այդ հոգեորական փարաւոնը տէրու-
թեան մէջ ամենազօրեղ մարդն էր գարձրել.
մայրաքաղաքում եկեղեցական բարձր պաշտօն-
ները զեկավարում էին նրա արրանեակիները: Տէ-
րութիւնը ծանր պարտութիւն էր կրել—և այդ
տեսնում էր ամեն ոք—և այդ պատահում է
ամեն անգամ: Երբ բիւրովրատիան որը հաւատի
զործերում խսկապէս անտարբեր է, փորձում
է կրուել գաղափարի ներկայացուցիչների դէմ՝
ինչպէս է եկեղեցին: Այնպէս էր երևում որ կար-
ծես, հոգեորական տիեզերական իշխանութեան
զեկը պէտք է անցնէր ս. Մարկոսի յաջորդին:
Եւ երբ 449թ. փոքր Ասիայի եպիսկոպոսներից

մէկը՝ Աղեքսանդրիայի պատրիարքին արեղերա-
կան եպիսկոպոս հոչակեց, զրանով նա խսկա-
պէս հպատակուեց իրապէս զոյութիւն ունե-
ցող պայմաններին:

(Եարունակելի).

Մեսրոպ վարդապետ.

—ο-ο-ο-

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆՆ.

ՅՈՒՏԱՆ.

Eine topographisch—historische Studie von Martin
Hartmann. Բնասան. Տեղա-
գրական—պատմական ու-
սումնասիրութիւն Մար-
տին Հարտմանին:

Գերմանիայում 1896-ին կազմուել մի ընկե-
րութիւն „Die Vorderasiatische Gesellschaft“—«Առա-
ջաւոր Ասիոյ ընկերութիւն» անունով, որի նպատա-
կըն է Առաջաւոր Ասիան յուշարձանների հիմամբ
ուսումնասիրել: Ընկերութիւնը իւր անգամների
գիտական երկերը պիտի հրատարակէ տետրակիներով:
որոնք երկար շարադրութիւններով ինչպէս և կարճ
նկատողութիւններով: պիտի լուսաբանեն շատ խըն-
դիրներ: Այլ և ընկերութիւնը կամենում է յա-
ռաջ բերել և նոր նիւթեր ձարելու ձեռնարկողներ
և պաշտպանել նոցա:

Մեր տարաբախտ երկիրն ևս Առաջաւոր Ասիոյ
մասն է կազմում: որ իւր անցեալով և շարաբա-
տիկ ներկայով գրաւել է վաղուց ի վեր գիտական
աշխարհի ուշադրութիւնն իւր վերայ, ուստի բնա-
կան է, որ այս ընկերութիւնն առանձին կերպով
հետաքրքրուի նորան ուսումնասիրելու:

Դեռ անցեալ տարի ընկերութեան հրատարա-
կութիւններից մինն էր յօդուածիս ճակատին գրօշ-
մուած գրքի մի տետրակը, իսկ այս տարի միւրը,
որոնք մի ամբողջութիւն, մի գիրք են կազմում 163
էջից. (Ա. տետրակը 1—60 էջ. և. 71—163), որի
հեղինակը Մարտին Հարտմանն, Քեռլինի արևելեան
լեզուների դպրանոցի արաբերէնի ուսուցչապետ,
ընկերութեանս նախագահն է:

Բոհյտանը մի վարչական միութիւն չէ: այլ
ժողովրդական անուն մի գուառի, ուր բնակուում
են Բոհյտ կոչուած քիւրզերը: Թուքրերն ա-
մենայն ժամանակ միտումն են ունեցել ժողո-
վրդի մէջ գործածական դարձած գաւառների ա-
նունները փոփոխել, բայց Բոհյտանն այն անուններից
մինն է, որ ցարդ պահպանուել է: Թէպէտ և Ալ-
խալիկին ասում է, որ Բուհտանը Սղերգի լեկա-
յութեան գաղաններից մինն է, սակայն այդ ճիշդ
չէ, գաւառների ժողովրդական և վարչական անուն-
ները միշտ ձշուրեամբ մի և նոյն երկիրը չեն նշա-
նակում: կամ, ինչպէս ասուում է, միմեանց չեն